

Փուսուլա «տոմսակ. 2. ցուցակ. 3. կողմնացույց», թրք. *busula* < իտալ. *busula* «կողմնացույց». առաջին երկու նշանակությունները չկան իտալերենի մէջ, հետևաբար եւ ձեւացած են յետնաբար փոխաբերութեամբ: Մեզ հետ ճշտի նոյն է նյն. *πύσουλ*».

Փուփա «քամին ետեւէն փչելով՝ նաւին յաջողութեամբ եւ արագ յառաջանալը». ոճով կ'ըսուի նաեւ «սամար՝ փուփա կերթայ կոր «նաւը յաջող եւ արագ կը սահի կ'երթայ». նաեւ փխր. մարդոց կամ գործի համար. գործը փուփա կերթայ կոր «գործը շատ յաջող է». ի՞նչպէս էս. — է՛հ, փուփա — յալփա կերթանք կոր «աղէկ-զէշ կ'ապրինք» + իտալ. *poppa* «նաւին ետեւը», Վենետիկ բարբառով՝ *pupa* նոյն նշ. (այս հիմնական նշանակութիւնը չկայ հայերէնի մէջ. անոր տեղ կը գործածուի թրք. խըշ). նոյնպիսի ոճով իտալ. ալ կ'ըսուի *col vento in poppa* «ետեւէն քամիով, այն է՝ յաջողութեամբ», ինչպէս որ Փրանս. ալ կայ *avoir le vent en poupe* «գործը շատ յաջող երթալ»:

Փուփէք «փունջ» < Փրանս. *bouquet*:  
 Փուփէ «ուտելիզներ պահելու դարան» < Փրանս. *buffet*:

Փոքա «սպիտակ հարց, *creuset*», թրք. *pot*. կը թուի եւրոպական, յատկապէս իտալական փոխառութիւն. թէեւ նման բառ մը չեմ գտած իտալերէնի մէջ, բայց հմմտ. Փրանս. *pot* «հողէ կամ մետաղէ աման», *potée* «ձուլարարի կաղապարի խմոր»:

Փոքէկրափ «լուսանկար պատկեր», թրք. *fotograf* < Փրանս. *photographie* «լուսանկարիչ», *photographie* «լուսանկար»:

Փոքին «կոշիկ», թրք. *potin* < Փրանս. *bottine* կամ իտալ. *bottino*:  
 Փոքինյառա «կոշիկի կոճակներու շարքը» < իտալ. *bottoniera* «հագուստին կոճակներու շարքը»: իտալերէնի ընդհանուր իմաստը մեր մէջ միայն կոշիկի համար մասնաորուելով՝ բառս այնուհետեւ կցուած է Փոքին «կոշիկ» բառին, որ պատահական նմանութիւն միայն ունի ասոր հետ (փոքին «կոշիկ» = Փրանս. *bottine*, իտալ. *bottino*, իսկ փոքինյառա = իտալ. *bottoniera*, Փրանս. *boutonnière*, որոնց արմատն է իտալ. *botone*, Փրանս. *bouton* «կոճակ»): Այս կապակցութեամբ իտալ. բառին օ ձայնը դարձեր է ի:

Փոքրա, փոքրա «երես քսելու բրնձափոշի» < Փրանս. *poudre*. բայց ուրկէ՞ յառաջացած է մեր վերջին ձայնաւորը. հմմտ. նաեւ նյն. *μπούζρα*.

Փոլիթիքա «քաղաքականութիւն» < իտալ. *politica*:  
 Փոլիս «ոստիկան», թրք. *pulis* կամ *polis* < Փրանս. *police* «ոստիկանութիւն»:

Փոլիցա «փոխանակագիր, փոխգիր», թրք. *poliça* < իտալ. *polizza*:  
 Փոլիս «տեսակ մը պար» < Փրանս. *polka* «տեսակ մը պար, որուն ծագումը լեհական է»:

Փոլիթիքա «քաղաքականութիւն». նոյն իտալ. *politica* «քաղաքականութիւն» բառն է, որ ունի նաեւ այս նշանակութիւնը. մեր մէջ նշանակութեանց համեմատ ձայնաւորներն ալ փոխուած են:

Փոմաքա «հոտաւէտ իւղերով օժանդակ՝ զարդի համար» < իտալ. *pomata*:  
 Փոմփօն «կօշիկ երեսը իրրեւ զարդ դրուած բրդոտ փափուկ փունջ» < Փրանս. *pompon* «փունջ, ծոպերով զարդ»:

Փոմիէ «մետաքսանման բարակ կերպար մը» < Փրանս. *pongé*, որ կը ծագի ճարտական *Pongee* քաղաքին անունէն:

Փոն «թէյով ու քօնեակով պատրաստուած տաք ըմպելիք մը. ջերմօղի», թրք. *ponç* < Փրանս. *punch* (կարդա փօնջ) կամ անգլ. *punch* (կարդա՛ փնջ):  
 Փօստա «թղթատարութիւն. 2. նամակատուն», թրք. *posta* < իտալ. *posta*:  
 Փօրթմէն «դրամապանակ, մէջը դրամ զներու կաշեայ աման» < Փրանս. *porte-monnaie*:

(Շարունակելի): 2. ԱՃԱՌԵՍՆ

ՊԵՏՄՈՒԹԻՐԻՆ ԼԵԶԱՐԵԱՆ ՏՈՂՄԻ

(ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՈՒՐՈՒԱԳԾԵՐ)

Ա Ռ Ա Ջ Ի Ն Մ Ա Ս

Աշխատախիբեց՝ ՅՈՂՄԻՓ ԹԱԳԷՈՍԵԱՆ  
 (Շարունակութիւն):

Ոչինչ այնպէս նշանաւոր անէ զմարդ, որպէս առաքինութեանց հանդէս: Թէ անմտաց են առ մեզ Հայկ եւ Տիգրան եւ Արամ, եւ Լազարեանցը բարեք ո՛չ մողասցին յաւիտեան:

Խաչիպեան ուսումնարանի աշակերտների ձօնը 1865 թ. ձեռագրանի 50-ամակի ասթի:

Գ Լ ՈՒՆ Ա .

ԼԱԶԱՐԵԱՆ ՏՈՂՄԻ ՅԵՂԱՊԵՏ՝ ՂԱԶԱՐ  
 ՆԱԶԱՐԵԱՆ ԼԱԶԱՐԵԱՆՅ  
 (1700—1782)

Հայ ազգը կորցրեց իր անկախ պետականութիւնը 1393 թ. Ռուբինեանց հարստութեան անկումով:

Այնուհետեւ Հայաստանը բաժանուեց մի շարք մանր իշխանութիւններին, որոնցից շատերը մեծ նախանձախնդրութեամբ պահեցին ու պաշտպանեցին իրենց անկախ կամ կիսանկախ գոյութիւնը մինչեւ 18րդ դարը, բայց անգոր եղան բարձրանալու համար զային պետականութիւն տեղի տալու անհրաժեշտութեան գաղափարին: Կենդանախոյս ձգտումներն ու հակումները առաջ բերին նրանց միջեւ փոխադարձ հակառակութիւն ու թշնամութիւն, որոնց մէջ նրանք իսպառ ջլատեցին ու քայքայեցին իրենց Ֆիզիքական ու բարոյական ոյժերը...


Կենտրոնական հակումների գերակայութիւնն եւ համագային պետականութեան զաղափարի թուլութիւնը հայ իշխանաւորների մէջ եղել են նաեւ հնում՝ հայ նախարարների մէջ, որի հետեւանքով Հայաստանը յաճախ դարձել է ռազմարեմ նրա թշնամիների համար արեւելքից եւ արեւմուտքից: Հայաստանը այդ ժամանակներում աւերուել է ու մոխրակոյտի վերածուել. բայց եւ այնպէս հայ ժողովրդի ո՛չ ստեղծագործ ոգին, ո՛չ էլ ազատասենյ ձգտումները երբեք չեն խորտակուել իսպառ. նա շարունակել է մի կողմից չէնացնել իր երկիրը, իսկ միւս կողմից մշակու-

թային կոթողներ կանգնեցնել, սակայն պետականորէն մնացել է կոտորակուած ու ջլատուած:

Ինչօ՞ւ. ինչօ՞ւնն է այս պատմական առեղծուածի գաղանիքը:

Նիկոլ Աղբալեան այսպէս է պարզաբանում այդ երեւոյթը<sup>1</sup>:

«Յեղական կենցաղն ու մտայնութիւնը շատ աւելի արմատացած ու գորաւոր եղան



Լազար Ն. Լազարեանց

քան պետաշէն մղումը: Այս մղումի լիակատար զարգացման արգելի դարձան երկրի կազմութիւնը, որ դիւրութիւն չէր տալիս մերձաւոր շփումների եւ փոխազդեցութեան. ինքնարաւ սնտեսութիւնը, որ չէր ստեղծում տնտեսական գորաւոր կախում երկրի տարբեր մարգերի միջեւ. երկրի շուրջ ստեղծուած մեծ պետութիւնները, որ մեծապէս գնահատում էին մեր լեռնաշխարհը իբրեւ ռազմական դիրք թշնամու դէմ եւ իբրեւ ապահով անցք դէպի հակառակորդի աշխարհը, ուստի եթէ չէին գորում գրաւել երբեմն, սակայն միշտ քայքայում էին ներքին գորացման ու միութեան ձգտումը»:

Մատնանշուած բոլոր հանգամանքները ի գորու են եղել նաեւ 18րդ դարում Արեւելեան Հայաստանում, ուր գոյութիւն ունէին

<sup>1</sup> Պատմութիւն Հայոց զբաղմունքեան, էջ 103:

մի շարք սուսնձին իշխանութիւններ Սիւնիքում, Ուտեայ աշխարհում, Գուգարքում, Գողթանում եւ մի շարք այլ գաւառներում<sup>2</sup>։

Այս իշխանութիւնները՝ մէկը միւսի ետեւից, ոչնչացան մահաբազան բռնակալների անողոք հարուածների տակ կամ գոհ գնացին իրենց փոխադարձ թշնամութեան։

Արեւելեան Հայաստանի այդ անկախ իշխանաւորները մէկն է եղել նաեւ իշխան Մանուկ Լազարեանը։

«Սրա որդին էր — պատմում է Մսեր Մսերեանը — Ղազար. ի Ղազարայ ծնան Մանուկ եւ Սափար. ի Մանուկայ՝ Նազար (կամ Նազարէք) եւ ի ամանէ միւս Ղազար (կամ Եղիազար), այն, որ Պետ եւ Գլուխ եկաց հուշակաւոր տոհմին Լազարեանց<sup>3</sup>»։

Բայց ինչպէ՞ս պատահեց, որ Լազարեան տոհմի այս շատախղը եկաւ Ռուսաստան, ստացաւ Եկատերինա Բ. կայսրուհուց ուսաց սպնուականութեան իրաւունք եւ սպահմբ դրեց Լազարեան հռչակաւոր տոհմի երկու սերունդներին, որոնց ներկայացուցիչները ի յայտ բերեցին փայլուն գործունէութիւն յողուտ իրենց խեղճ Հայրենիքին եւ հզօր Ռուսաստանին։

Այդ մասին պատմուած է յիշեալ կայսրուհու 1774 թ. մայիս 20ի բարձրագոյն հրովարտակի մէջ, որը գրեթէ ամբողջութեամբ առաջ ենք բերում, քաղելով այն Մ. Մսերեանցի «Յիշատակարան»ից։

... «Հաւաստի լեալ է մեզ, զի որ գտանի արդէն ի Մերում կայսրութեան՝ Ղազար (Նազարեան) Լազարեանց ընդ որդւոց իւրոց, է՛ր յԱզնուական սերնդոց ի Հայս. որում վկայեն եւ մատուցեալքն առ ի նմանէ վաւերական վկայագիրք տուեալք յԱրքայէն վրաց ի Թէյմուրասայ<sup>4</sup> եւ ի ծայրագոյն Պատրիարք-


գէն Հայոց. եւ զի նախահաւ նոցա Մանուկ Լազարեան, յետ սպառելոյ ի Հայաստան Արքայական գարմի, եւ յետ բաժանման նոյն քաղաւորութեան ի մասունս, է՛ր մի ի Պայագատացն՝ որք տիրէին յառանձին առանձին գաւառս։ Ծահաբաս Առաջին (արքայ Պարսից)<sup>5</sup> ոչինչ օգտեալ յերկարատեւ յանյաշոյ պատերազմացն՝ գորս մղէր ընդդէմ նոցա, հարկեցաւ զիջանիլ ի հաշտութիւն, եւ սկսաւ վարիլ ընդ նոսա շոյումիւք եւ քաղցրութեամբ, այնպէս՝ զի բազումք յականաւոր եւ ի մեծահարուստ գերդաստանաց յօժարեցան ունել բնակութիւն ի մայրաքաղաքի անդ նորա (այն է յԱսպահան), ընկալեալ գազատութիւն յամենայն զինուորական ծառայութեանց։ Իսկ Ծահաբաս ի մտի եղեալ գումանս ի նոցանէ յինքն յանկուցանել, շնորհեաց նոցա քաղաքական ինչ աստիճանս՝ առ ի պատիւ եւեթ։ Ի թիւ Աստիճանաւորացն այնոցիկ՝ էր եւ նա ինքն Մանուկ Լազարեանց։ Է՛ր նորա որդի մի Լազար անուն, որ յաւուրս Երկրորդին Ծահաբասայ կարգեցաւ վերատեսուչ Փոզերանոցի եւ Գանձապետ Արքունի։ Ի նմանէ ծնան Մանուկ եւ Սափար. ի Մանուկայ՝ Նազարէք. եւ ի ամանէ միւս Լազար, որ մինչ էրն ի Պարսս, ծանօթ գոլով Արքունի Իրանն կատարեաց զբազում պաշտամունս յանձնարարութեամբ Նատիրշահայ. կացուցաւ եւս Հրամանատար կամ Պետ ի վերայ ժողովրդեան Զուղայ քաղաքի։ Այլ սպա ի պատնաս աղմկացն յուզելոց ի Պարսս՝ էլ անտի, եւ եմուտ ի սահմանս կայսրութեան մերոյ հանդերձ որդւովք եւ ստացուածովք իւրովք. ուր եւ կանգնեաց գերեւելի գործարանս, եւ եցոյց մեզ հանապազ ընդ որդւոց իւրոց բազմապիսի ծառայութիւնս։ Որոյ վասն շնորհեցաւ Մեք նմին Լազարայ Լազարեանց եւ որդւոց նորա զիրաւունս Ազնուականութեան Ռուսաց, ի 20 մայիսի 1774 ամի<sup>6</sup>։

Այսպիսով Լազարեանների տոհմագրութիւնը ներկայացնում է հետեւեալ պատկերը.

<sup>5</sup> Շահարաս Ա. — 1586—1629. Շահարաս Բ. — 1642—1686. Նադիր Շահ — 1736—1747:  
<sup>6</sup> Տե՛ս Մ. Մսերեանցի «Յիշատակարան» մաս Բ., էջ 1—2. ուր բերած են թարգմանութիւնները բոլոր բարձրագոյն հրովարտակիւրէ, որում Լազարեան տոհմի անդամներին։

<sup>2</sup> Տե՛ս՝ «Պատմութիւն Հայոց» Չածէանի, հատոր Գ.։  
<sup>3</sup> Տե՛ս էջ 2 «Յիշատակարան կենաց եւ գործոց մեծանուն պայազատաց Լազարեան տոհմի։ Ծահաբարեալ ի Մսերայ մագիստրոսէ եւ սպետէ Գրիգորեան Մսերեանց։ Ի Մոսկուա ի տպարանի Արեւելեան լեզուաց ձեւարանի Տեպրց Լազարեանց։ 1856. ՌՅԵ. էջ 60 + 109 + 159 = 328։  
<sup>4</sup> Թուրքի թէ Քամբազն իցէ սա՛ Հայր Մեծի իշխանին վրաց Հիրակեայ. որ թագաւորեաց յամէն 1724—1762»։ Մ. Մսերեանց։

Իշխան Մանուկ Ա. Եղիազարեան (Լազարեան),  
Նահապետ Լազարեան տոհմի։  
(Տարագրուել է Հայաստանից Սպահան Շահարաս Ա. օրօք)



Մանուկ Լազարեանի, տոհմի նահապետի, տարագրութեան մասին Պարսկաստան հաղորդում է նաեւ ռուս պատմաբան Սերգէյ Գլինկան մատնանշելով միաժամանակ այն յարգանքի եւ հեղինակութեան վրայ, որ նա վայելել էր իր Հայրենակիցներին կողմից տարագրութեան ընթացքին եւ Ն. Զուղայում։

«Ծահ-Աբաս ի նմանութիւն Զուղայոյն Հայոց՝ գաւանն շինեալ յիւրմէ առ երի Ասպահանայ անուանեաց «Նոր Զուղայ»։ Յամին 1605 Մանուկ Լազարեանց գուարնացեալ յուսով վերածնութեան Հայաստանի, նախ առաջին ի Հին Զուղայոյ անապարեաց ի Նորն. եւ հորդեաց նանապարի փութալոյ անդր իւրոցն հայրենակցաց, որք ի յարգանս ունէին գնա՝ ո՛չ վասն իշխանական աստիճանի, եւ ո՛չ վասն հարստութեանն, այլ միայն վասն անձնանուէր փութոյն ի կազմութիւն եւ ի քաջալերել գլխատեալ ոգիս որդւոցն Հայաստանի։ Վեհանձն ոգիք անպատում գգան բերկրութիւն ի բերկրեցուցանելն զիւրեանց չարչարակիցս<sup>7</sup>։

<sup>7</sup> Այս հատուածը թարգմանաբար բերել է Մ. Մսերեանցը իր «Յիշատակարան»ում (էջ 92, Մասն Գ.)։

Եկատերինա կայսրուհու յիշեալ հրովարտակի մէջ միայն հարեանցօրէն է ակնարկ արուած Լազարեանի Ռուսաստան փոխադրուելու պատճառի վրայ՝ «այլ սպա ի պատճառս աղմկացն յուզելոց ի Պարսս»։ Բայց յայտնի է, որ հէնց Նադիր Շահի կենդանութեան ժամանակ Ն. Զուղայի հայերը ենթարկուել են անսահման կեղեքումներին ու խժոճութիւններին, իսկ նրա մահից յետոյ Պարսկաստանում տեղի են ունեցել մեծ խռովութիւններ, ստեղծուել է մի կատարեալ քաոս, միանգամայն անհանդուրժելի մասնաւորացէս հայերի համար։

Նոր-Զուղայեցիներին այդ օրերին կրած տառապանքների մանրամասն նկարագրութիւնը տալիս է Նոր Զուղայի համբաւաւոր պատմիչ Յարութիւն Տէր-Յովհաննէսը. մի փոքրիկ հատուած նրա աշխատասիրութիւնից, գաղափար տալու համար ստեղծուած կացութեան մասին։

«Նադիրշահը ունելով բնաւորութիւն յոյժ ընչաւեր եւ ազաւ, եւ յաղագս գորականացն հարկ լինելով նմա պատրաստել գոռնիկս, շուղայաբնակ վանաւականացն Հայոց հասոյց գմեծամեծ տառապանս, ստանալով ի նոցանէ բազում գումարս։

... «Արկանէ հարկս ի վերայ նոր Զուղայեցոցն ի թուոյն 1739 մինչեւ ց1747, պահանջելով ամ ըստ ամէ անընդհատ ո՛չ պակաս քան գտան հազար թուման մինչեւ ց45.000 թումանս՝ գորս յամի միում միայն...։ Երկու ամօք նախ քան զմեռանիլն իւր յամի 1745 էարկ ի վերայ Զուղայեցոց գտուգանս 65.000 Նադիրի<sup>8</sup> եւ յանձնարար Մանուկուգարէկ անտապետի իւրում ստանալ զայն. որոյ էլեալ ի Զուղայ բազում տանջանօք ստացաւ յընթացս միամտեայ ժամանակի գմեծաբանակ զայն գումար ի իշխանաց (Հայոց)<sup>9</sup>»։

Այս իշխանների թուումն էր եւ մեր Խօջա Աղազարը կամ Ղազարը։

քաղելով Սերգէյ Գլինկայի յայտնի հեղինակութիւնից՝ «Պատմութիւն Հայոց», տպագրուած 1832 թ., որը, սպասուած լինելով վաղուց, մենք չունէինք մեր ձեռքի տակ։

<sup>8</sup> Պատմիչը ինքն եւս չգիտէ, թէ «Նադիրին» թուման էր թէ մի այլ արծաթադրամ, զանդի առում է՝ «չիք նշանակութիւն յօրինակ հրովարտակին եւ ի ստացաղիւն»։

<sup>9</sup> Տե՛ս էջ 250, Հ. Ա. յիշեալ հեղինակի «Պատմութիւն Նոր Զուղայու որ յԱսպահան»։ Ն. Զուղայ, Տպարան Ամենափրկչեան Ս. Վանաց։ 1880, Հ. Ա. 1881, թ. Հ. Բ.։

Եւ աճա՛ Սօջա Ղազար Լազարեանցը. օր առաջ ազատուելու համար շատ աւելի անախորժ ու վատթար անակնկալներէից, մանաւանդ որ Նաղիբը ապանութիւնից յետոյ ստեղծուեց միանգամայն խառնաշփոթ կացութիւն, հաւաքում է իր ընտանիքը, վերջնում իր հետ խոշոր զբաղման իւր թանկագին հագուազիւտ իրեր ու գնում Ռուսաստան 1749 կամ 1750 թուին, ձգելով իր սեպհական ապարանքն ու կալուածները<sup>10</sup>:

Սօջա Ղազար Լազարեանը նախ քան Ռուսաստան տարագրուելը ունեցել է չորս տղայ զաւակ՝ Յովհաննէս, ծն. 1735 թ., Միկաս, ծն. 1737 թ., Խաչատուր, ծն. 1741 թ. եւ Յովակիմ, ծն. 1743 թ. ամէնքն էլ ծնուած Ն. Զուղայում:

<sup>10</sup> Լէօն Սօջա Ղազար Լազարեանի գաղթի թուականը ղեպի Ռուսաստան համարում է 1747 թ., իսկ Մ. Մսերեանը՝ 1749 կամ 1750 թ. յենուելով հետեւեալ հանգամանքների վրայ. նախ, որ տեղափոխութիւնը կատարուել է Նաղիբը մահից յետոյ, իսկ այդ շահը սպանուել է 1747 թ., երկրորդ, որ գաղթի ժամանակ Սօջա Ղազարի կրտսեր որդին՝ Յովակիմը 6 տարեկան է եղել, իսկ սա ծնուել է 1743 թ.: Մենք, համարելով Մ. Մսերեանցի տուեալներն աւելի հաւանական ու ճշմարտութեան մօտ, ընդունել ենք նոյնպէս 1749 կամ 1750 թ.:

Երկու խօսք նաեւ Լազարեանների տան մասին Սպասնում ու Ն. Զուղայում:

Նոր Զուղայի պատմիչը իր յիշեալ աշխատասիրութեան մէջ (Հ. Ա., էջ 107) հարգում է, որ Մանուկ Լազարեանցը 1605 թ. Հին Զուղայից փոխադրուելով Սպասն, բնակութիւն են հաստատում Սպասնի Ծամապատն թաղում, ապա 51 տարի անց, Լազարեանները փոխադրուում են Ն. Զուղայ եւ Գաշտ թաղամասում շինում են նոր տուն: Այս տունը գլխութիւն է ունեցել մինչեւ 1880 թ. եւ յայտնի Նաղարեանցի տունն անունով՝ «յանուն Նաղարեանց որդւոյ Աղազարի թոռն Մանուկայ: Տունն նոցա կայ այժմ (այսինքն՝ երբ հեղինակը գրելիս է եղել իր պատմութիւնը 1880 թ. ի ձեռք ժամանակացի Զարբրիա Կրէտեանց, որոյ մեծութիւնն եւ ապարանիցն վայելչութիւնն վկայել պայծառութեան նոյն տոհմի: Կից այնմիկ տան՝ տունն որ կայ այժմ ի ձեռք Տէր Մարտիրոս քահանայի Տէր-Յովակիմեան, եղեալ Կանանց նոցա, տունն Կիրակոսի Տէր-Յարութիւնեան՝ ասպատակոց (սխտո ձիերի համար) նոցին, եւ տունն Մկրտչի Ծատուր Անդրէասեան՝ տեղի բնակութեան ծառայից նոցուն»:

Այս տոթի յիշատակներ նաեւ մեր հայրենակից Մուշեղ Սարգսեանի (այժմ հանգուցեալ) տուած տեղեկութիւնները, թողելով նրա ձեռագիրներէից, մասնաւոր յետոյ մեզ հասած:

9. Մուշեղ Սարգսեանը, մասնագիտական կրթութեամբ հմուտ գրիգորաբան, իր Ն. Զուղա եղած ժամանակ հետաքրքրուել է Լազարեան տոհմի պատմութեամբ, այցելել է վերը յիշատակուած տները, լուսանկարել նրանց ներսի մասերը, մասնաւոր շէնքի մէջ տեղի ունեցած փոփոխութիւնները: Ի միջի այլոց բացատրում է Գաշտ թաղամասի անունն ծագումը: Այդ թաղամասը, ասում է նա, Գաշտ է կոչուած, որովհետեւ այնտեղ են բնակութիւն հաստատել Ներքին-Աղազիւց տարագրուած բնակիչները՝ զօհերը, իսկ յայտնի է, որ Ներքին Աղազիւն տեղական բնակիչները Գաշտ անունն էին տալիս:

Սօջա Ղազարի Ռուսաստան փոխադրութեան հանգամանքները Ն. Զուղայի յիշեալ պատմիչ Յարութիւն Տէր-Յովհաննէսը հետեւեալ կերպով է նկարագրում.

«Այլ մինչ ի ժամանակս քաղաքութեան ի Զուղայ, եւ վաճառականք Զուղայու մատնեալ տուժից եւ տուգանաց անհանգիստ լինելին. իշխանապետն Աղազար (Ղազար) խոհական մտախոնարքեամբ յամի 1743 զանդրանիկ որդի աղայ Յովհաննէս առաքեաց ի Ռուսաստան զի քերեսու եթէ ի դէպ համարեցէ նա համտանել յայնմ օտար սահմանի գրեականքիսն իւրեանց, տեղափոխեցին ի Զուղայոյ՝ յաղագս գերծ մնալոյ յանկուար հարստահարութեանցն այնր ժամանակի» (էջ 95):

Այս վարկածը զրեթէ բառացի կրկնում է Լեւել Լէօն իր «Հայկական տպագրութեան» Բ. հատորի մէջ, էջ 439.

Մենք միանգամայն անհաւանական ենք համարում, որ Սօջա Ղազարը նման մի լուրջ յանձնարարութիւն տուած լինի իր աւագ որդի Յովհաննէսին, որ այդ ժամանակ՝ 1743 թուին ընդամէնը 8 տարեկան մի մանուկ էր եւ այն էլ այն ժամանակուայ խառնակ օրերին եւ հաղորդակցութեան ծանր, իսկ շատ անգամ անապահով պայմաններում:

Լէօն դեռ աւելացնում է իր կողմից, որ «Յովհաննէսը լաւ լուր է բերում եւ Աղազարը 1747 թ. ընդ միշտ թողնում է Զուղան եւ ընտանիքով գնում Ռուսաստան»:

Աւելացնենք, որ Լազարեանների քաջահմուտ կենսագիր Մսեր Մսերեանցը նման բան չի գրում իր «Յիշատակարան»ում:

Այսպէս թէ այնպէս Սօջա Ղազարը, ապահով հասնելով Հաշտարիսան, հաստատուն բնակութիւն չի հաստատում այնտեղ. նա մնում է այնտեղ միայն երկու տարի. այդ ժամանակամիջոցում նա պտտում է Ռուսաստանի գանազան քաղաքներ եւ ի վերջոյ ընտանիքով փոխադրուում է Մոսկուա եւ այստեղ մշտական բնակութիւն հաստատում:

Այն փողոցը, ուր Սօջա Ղազարը բնակութիւն է հաստատում եւ ուր հետագայում նրա զաւակները կառուցեցին Ս. Սաչ Հայոց եկեղեցին եւ Լազարեան ձեմարանը, մինչեւ այսօր էլ ի յարգանս Լազարեանների յիշատակին կոչում է՝ Հայոց Փողոց:

Սօջա Ղազար Լազարեանը, փոխադրուելով Մոսկուա, ձեռքերը ծալած չի նստում, այլ անմիջապէս գործի է անցնում, շահեցնելու իր բերած գրամագլուխը եւ ընդ միշտ ապահովելու իր ընտանիքը, իր զաւակներին:

Եւ արդարեւ, արդէն 1753 թ. Մոսկուայի շրջակայքում, մայրաքաղաքից 60 վերստ հեռավորութեան վրայ, Բօզօրօսկի գաւառում, Ֆրեանովօ գիւղում, նա գնում է մի կալուած 500 շունչ ճորտ գիւղացիներով հանդերձ: Այստեղ նա կառուցում է կառուի ու կերպասի գործարաններ, հրաւիրում արտասահմանից (Եւրոպայից) հմուտ վարպետներ ու գործաւորներ:

Շուտով նա այնպիսի կատարելագործութեան է հասնում իր գործարանների արտադրոյթները, որ նրա պատրաստած մետաքսեայ գործուածքները ստանում են մեծ հռչակ ոչ միայն Ռուսաստանում, այլ եւ արտասահմանում: Ժամանակակիցները վկայում են, որ Սօջա Ղազարի պատրաստած մետաքսը իր որակով, իր նրբութեամբ ու գեղեցկութեամբ ոչնչով պակաս չէր Ֆրանսիայի Լիօն քաղաքի հռչակաւոր մետաքսից: Եկատերինա Բ. կայսրուհու պալատի մետաքսի բոլոր պէտքերը հոգացում էին Լազարեանի գործարանների արտադրոյթներէից: Կայսրուհին այդ մետաքսը ուղարկում էր որպէս նուէր նաեւ արտասահմանի բարեկամ արքունիքներին:

«Դիպակի Բուկիբիլ — գրում է Մ. Մսերեանցը — կերպասի մետաքսիայք, քարիւնք («բարխատ»), քարիշ) եւ այլ պէս-պէս գործածք որ ի գործարանաց անտի ելանիին՝ ընտիրք յոյժ էին, գեղեցկիկ եւ ազնուագոյնք, ոչինչ ընդհատք ի Գաղիացոցն եւ յԱնգղիացոցն, մինչեւ Արժուեացն անգամ Փեթերպուրկայ ի պէսս գալ» (էջ 6)<sup>11</sup>:

Ղազար Լազարեանի գործարանները պտարաստում էին նաեւ պատարդքեր կամ «քուղք նկարիւնք» (ռուս. «օբօի») «որովք պատեալ գարդարեցան բազում սենեակք յԱրքունիս Փեթերպուրկայ՝ յանուանեալս Ձիմիւրի եւ Թափրիչէսքի» (էջ 96, Մ. Գ.):

<sup>11</sup> Նոյն տեղեկութիւնները տալիս է նաեւ ռուս պատմաբան Սերգէյ Գլենկան «Հայ ժողովրդի պատմութեան» մէջ ինչպէս եւ յիշատակուած են «Ակտերի ժողովածուի» մէջ, որոնցից եւ օգտուել է «Յիշատակարանի» հեղինակը՝ Մ. Մսերեանցը:

Ղազար Լազարեանը հռչակ ստացաւ ու մեծ դիրք գրաւեց եւ ապա ազնուականութեան իրաւունք ստացաւ կայսրուհուց իր եւ իր զաւակների համար ո՛չ միայն իր գործարանային արդիւնարեւութեամբ, որը նա հասցրեց կատարելագործութեան. ճիշտ է, այդ ձեռնարկներով աշխատանք հայթայթեց բազմաթիւ ռուս բանուորներին, արհեստաւորներին ու գիւղացիներին եւ միաժամանակ տարածեց Ռուսաստանում մետաքսագործութիւնը. այս ամէնը գնահատուեց թէ կառուվարութեան եւ թէ բարձր հասարակական շրջանների կողմից, բայց դրանով չսահմանափակուեց նրա գործունէութիւնը: Լաւ ծանօթ լինելով Արեւելքի կեանքին, նա թանկագին տեղեկութիւններ ու խորհուրդներ էր տալիս կառավարութեան, օգտագործում էր իր առեւտրական կապերն ու ծանօթութիւնները զարգացման Արեւելքի, մասնաւորապէս Պարսկաստանի հետ:

Սօջա Ղազարի համբաւը հասել էր մինչեւ արտասահման: Մ. Մսերեանցը «Գաղղիական ընդհանուր բառարան արուեստից եւ գիտութեանց» հրատարակութիւնից առաջ է բերում հետեւեալ երկտող վկայութիւնը.

«Զարդարեալ գոլով երկնապարգեւ ձրիւք Ղազար Եղիազարեան (Լազարեան) ունէր ապաւէն գայնախի ինչ սպաս ծառայութեան մատուցանել Ռուսիոյ, որ երախտապարտ նմին կացուցանելոց էր գազգս յոլով» (էջ 7. Ա. Մաս):

Լազարեան տոհմի այս համբաւուր ցեղապետը, որ հայ ստեղծագործող հանճարի մի ներկայացուցիչը հանդիսացաւ այդ վաղ ժամանակներում, օտար երկնքի տակ, վախճանուել է խոր ծերութեան հասակում՝ 82 տարեկան, 1782 թ. յունուար 8ին Մոսկուայում եւ թաղուել է Մոսկուայի Վազան-գորսկի Հայոց Գերեզմանատանը՝ Մ. Յարութիւն եկեղեցում: Նա ծնուել էր 1700 թ. ապրիլ 3ին Ն. Զուղայում:

Տապանագիրը հայերէն եւ ռուսերէն լեզուներով հետեւեալ պարզ վերտառութիւնն ունի.

«Աստանը հանգչին ոսկերք առն բարեպաշտի՝ Ազնուականին Ղազարայ Նազարեան Լազարեանց, ծնելոյ ի 1700 ամի,

յԱպրիլ 3, եւ փոխելոյ յաստեացս յ8 յու-  
նուարի 1782 աւի, ի Մոսկով»:

Հազար Հագարեանի կինը՝ Աննա Յովա-  
կիմեան, որի հայրը Չուղայեցի ահանաւոր  
զէմբերից է եղել, վախճանուել է 1770 թ.  
յունուար 13ին, 60 տարեկան հասակում, եւ  
թաղուել է Մոսկուայի Պրեսնեա թաղամասի  
գերեզմանատան՝ Ս. Աստուածածնի Հայոց  
եկեղեցում:

(Շարունակելի):

ԱՐՏԱԽԱԳՎ ԱՐՔԵՊ. ՍԻՐՄԵՆԱՆ, Մայր Յուցակ  
հայերէն ձեռագրաց Երուսաղէմի Սուրբ Յակո-  
բեանց վանքի: Հատոր Ա., վեցերորդ 1948,  
8<sup>0</sup> մեծ, էջ ԺԵ + 374: Գինը՝ 10 տոլար:

Երուսաղէմի Ս. Յակոբեանց Մատենա-  
գարանի հայերէն ձեռագրերու ցուցակա-  
գրութեան առաջին փորձը կատարած է  
Տիգրան Սաւարանեան 60ական թուականին,  
ամփոփ ձեւի մէջ, ցուցակագրելով 1750 ձե-  
ռագիր: Նոր ցանկ մը, աւելի գիտնական  
ուճով ձեւնարկած է պատրաստել Վեհաշնորհ  
Պապայեան Սահակ կաթողիկոս. այս գործը  
մնացած է կիսատ եւ անտիպ: Առթիւ Աս-  
տուածաշունչի 1500ամեայ յորելեանին  
յանձնուած էր 1935ին Նշանեան Մեսրոպ  
կաթողիկոսին կազմել Ս. Գրքի հայոց ձեռա-  
գիրներու ցուցակը, գոր եւ հանած է ի  
գլուխ, բայց չէ հրատարակուած: Մատե-  
նագարանը ունի այժմ իր 3700 ձեռագիր.  
այս ճոխ թիւը կը պարունակէ անշուշտ իր  
մէջ գրական մեծ արժէքներ, հետաքրքրա-  
կան ոչ միայն հայ, այլեւ միջազգային գի-  
տութեան. եւ ցանկալի էր, որ գոնէ ցուցա-  
կագրութեամբ ներկայացուէր անոր բովան-  
դակութիւնը գիտական աշխարհի: Ձեռա-  
գրաց մեծ թիւը գժուարին պիտի ըլլայ մէկ  
հատորի մէջ ամփոփել. գործը պիտի զի-  
րինար, եթէ պրակ պրակ գրուէր հրատար-  
ակ:

Այս գործին նպաստ մը մատուցանելու  
համար աշխատութիւնը յանձն առած է Ար-  
տաւագ Սրբազան ցուցակագրել այդ Հա-  
ւաքման փոքր մաս մը, գոր կը զնէ այժմ

գեղեցիկ տպագրութեամբ հրատարակ: Առա-  
ջին 140 ձեռագիրներու ցուցակն է հատորիս  
հական մասը. անոր կցուած է յաւելուածա-  
բար նոյն Հաւաքման այլ 38 ձեռագիրներու  
ցուցակը, գորոնք ցուցակագրած է այլ եւ  
այլ առիթներուն:

Անխոնջ աշխատասէրը իր եռանդը նախ-  
նեաց ձեռագիրները ցուցակագրելու հանդէս  
բերած էր ասկէ յառաջ ալ տարով երկու հա-  
տորի մէջ Հայկալի Գառաւուն Մանկունք  
Եկեղեցւոյ եւ նոյն քաղաքի Մասնաւորներու  
քով գտնուած ձեռագիրներու ցուցակը: Ամէն  
գովութեան վեր է այս նախանձախնդրու-  
թիւնը. եւ կը շնորհաւորենք Սրբազանին  
բարի եռանդը:

Որովհետեւ աշխատութիւնս կը ներ-  
կայացուի իրրեւ Ա. հատոր Երուսաղէմի  
Ս. Յակոբեանց վանքի ձեռագիրներու ցու-  
ցակին, կարելոր կը համարիմ վերհանել  
անոր առաւելութիւններէ աւելի պակասները  
ի յորդորումն եւ ի գլուխը ձեռագրերու շա-  
րունակողներու: Ուստի թոյլ պիտի տայ ինձ  
հատորիս աշխատասէր հեղինակը ընել զի-  
տողութիւններս:

1. Հատորս ճակատ կը կրէ. «Մայր ցու-  
ցակ»: Այսպէս նաեւ Հայկալի ձեռագրաց  
Բ. հատորը. անշուշտ հետեւողութեամբ  
Հ. Բ. Սարգիսեանի, որ նոյնպէս մակա-  
գրած է իր Յուցակն Վեհեօթիկի Միթիա-  
րեանց ձեռագիրներու: Ինձ կը թուի թէ  
անիմաստ վերագիր մ'է հոս «մայր»: Հ. Յ.  
Տաշեան, որ առաջին օրինակը տուաւ յորի-  
նուածական ցուցակ կազմելու, մասնաւոր  
հատորներու համար ընտրեց պարզ խորա-  
գիրը՝ «Յուցակ հայերէն ձեռագրաց...»: Այսպէս  
նաեւ Փ. Կոնիքի Բերտ. Թանգա-  
րանի եւ Օքսֆորդի ձեռագրաց ցուցակներու  
ճակատը. Catalogue of the Armenian Manu-  
scripts..., Փ. Մակլէր Ազգ. Մատենագա-  
րանի՝ Catalogue des manuscrits arméniens...  
Ն. Ֆինկ Տիւրինգենի՝ Verzeichnis der arm.  
Handschriften եւ այլն: Իսկ այսպէս կազ-  
մուած ցուցակներու շարքին համար նշանա-  
կեց Հ. Տաշեան ընդհանուր խորագիր մը՝  
«Մայր Յուցակ հայերէն ձեռագրաց...», Հա-  
տոր Ա., տետրակ Ա. եւ այլն, որ ճշգիւ կը  
համապատասխանէր Երուսաղէմի գործա-  
ծած ընդհանուր խորագրին՝ Hauptkatalog:

2. Եթէ հատորս Երուսաղէմեան ձեռա-  
գրաց ցուցակին Ա. հատորը պիտի կազմէ,

աննպատակ ուսում կը համարինք յաջորդ-  
հատորներու պատկանող ձեռագրաց ցուցա-  
կագրութիւնները (Թ. 141—164), որոնք հա-  
մար կը կրեն 271, 306, 318, 365, 373, 417,  
453, 1620, 1240, 1535, 1924, 1930, 1946,  
1955, 2154, 2311, 2497, 2625, 2629, 2649—  
2651, 3026 եւ հատ մ'ալ՝ 11 Բ. որ տակաւին  
նոյն իսկ չէ համարագրուած ձեռագրաց շար-  
քին մէջ: Մինչ այս յաւելուածական բա-  
ժինը կը կցուի Հատորիս, անուշագրու-  
թիւնը կը կցուի Հատորիս, անուշագրու-  
թեամբ անտեսուած են բուն շարքին Թ. 35  
(Յայտմաւուրք 1435է) եւ Թ. 134, իսկ  
Թ. 135 Գանձարանը սխալմամբ ստացած է  
134 համարը:

3. Շատ տաղտկալի եւ յոգնեցուցիչ աշ-  
խատանք է ձեռագրաց ցուցակագրութիւնը,  
յատկապէս այն ձեռագիրներու, որոնք քիչ  
արժէք կը ներկայացնեն ըստ բովանդակու-  
թեան: Բայց ցուցակագիրը, որ պաշտօն  
ստանձնած է կազմել Հաւաքման մը ձեռա-  
գիրներու ցուցակը, պարտական է խզմտօ-  
րէն ի գլուխ հանել աշխատանքը: Ձեռագրաց  
ցուցակը յատկապէս կը պահանջէ մէն մի  
ձեռագրին բովանդակութիւնը վերհանել ա-  
մենայն բարեխղճութեամբ, ըլլայ այն պի-  
տանացու կամ անպէտ. մէկուն անպէտ հա-  
մարածը կարող միւսին պիտանացու երեւալ:  
Կարելոր է բովանդակութիւնը ներկայացնել  
հեղինակին խօսքերով, անոր ընտրած խո-  
րագրով եւ բաժանումներով. ժողովածու  
ձեռագիրներու խրաքանչիւր հատուածները  
տալ խորագիրներով, սկզբնաւորութեամբ  
տալ վերջաւորութեամբ: Երբ ձեռագիր մը  
եւ վերջաւորութեամբ: Երբ ձեռագիր մը  
ուստի բազմաթիւ օրինակներ, անոնցմէ մին,  
յատկապէս առաջինը պէտք է ներկայացնել  
ըստ կարի մանրամասն ցուցակագրութեամբ  
եւ միւսները առաքել անոր, եթէ չունին  
մասնաւոր նկարագրական գծեր: Այսպէս  
նաեւ հաւաքական գործեր՝ Մաշտոց, Շա-  
րակոց, Գանձարան, Տաղարան, Կանոնա-  
գիրք, Վարք Հարանց, Յայտմաւուրք եւն:  
Շատ անգամ այս հաւաքական անուամբ ձե-  
ռագիրներ անհաւասար են իրենց ներքին բո-  
ւանդակութեամբ: Արտաքնոյն նկարագրու-  
թեամբ եւ Յիշատակարաններու արտագրու-  
թեամբ ձեռագիր մը չի կրնար ցուցակա-  
գրուած համարուիլ: Կը յիշեմ դէպք մը.  
Երուսաղէմ Լալայեան օր մը արամազրեց ինձ  
իւր կազմած Վասպուրականի ձեռագրաց ցու-  
ցակին երկրորդ հատորի ձեռագիր ցուցակը:

նկատեցի հոն «Անանիա վարդապետի Գննի-  
կոն»։ այսքան միայն. կը յաջորդէին յիշա-  
տակարանները: Երբ հարցուցի իրեն, թէ  
ինչո՞ւ այսքան կարճ ցուցակած է ձեռա-  
գիրս, որ իր տեսակին մէջ հաշուազուտ  
օրինակ մը կը ներկայացնէր, պատասխանեց.  
«Ես ի՞նչ գիտնայի, թէ կարելոր գրութիւն էր  
այն»։ Եւ սակայն ցուցակագրողին պարտքն  
էր յիշատակարաններէ աւելի ձեռագրին բո-  
ւանդակութեան ուշադիր ըլլալ: Անանիա  
Շիրակացւոյ այդ կարելոր միակ օրինակը  
ինչպէս կը յայտնուի, այնպէս ալ կ'անհե-  
տանայ: Գոնէ բովանդակութեան նկարա-  
գրութիւնը մնացած ըլլար:

4. Որչափ ալ գովելի է Յուցակագրին  
ընթացը, ձեռագրին արտաքինը լայնօրէն ներ-  
կայացնելու եւ Յիշատակարանները ամբող-  
ջութեամբ ընծայելու, բայց բանասիրական  
տեսակէտէ անգոհացուցիչ կը գտնեմ ներք-  
նայն նկարագրութիւնը, որ բովանդակու-  
թեան կը հայի: Տեղ տեղ կը տարածուի  
աւելի քան պէտք է, այլուր կը բաւականա-  
նայ հարեւանցիկ ակնարկով, երբեմն նոյն  
իսկ շատ ժլատ է խօսք մ'աւելի ըսելու ի  
նպաստ պայծառութեան:

Թ. 29 եւ 50 կը բովանդակեն Յովետ  
քահանայի Պատմութիւնն ընդհանուր աշ-  
խարհի թարգմանութեամբ Ջահեցի Հ. Տո-  
մինիկոսի. երկու ձեռագիրներն ալ նկարա-  
գրուած են հարեւանցիկ, առանց տալու խո-  
րագրին եւ սկզբնաւորութիւնը այնպէս ինչ-  
պէս է ձեռագրին մէջ: Այսպէս նաեւ Թ. 20,  
որ է Թովմայի Աստուածարանութիւնը Ղու-  
կաս Խարբերոցւոյ թարգմանութեամբ. միակ  
օրինակը, որքան ինձ ծանօթ է: Թ. 18,  
էջ 228—314 կ'ընծայէ Եփրեմ Աջլազ կաթո-  
ղիկոսի Սաղմոսաց Մեկնութիւնը մինչեւ  
Սաղմ. է: Ոչ խորագիրը, ոչ սկզբնաւորու-  
թիւնն եւ ոչ ալ վերջաւորութիւնը յառաջ  
բերուած են: Ձեռագիրը վերջաւորութեան  
ունի նաեւ Տաղաչափեալ երգեր, բայց չեն  
ցուցակագրուած անոնք: Ամէնէն վերջը կը  
գտնուի նաեւ Արբաշամ Աստապատցւոյ Տա-  
պանագիրը, որմէ յառաջբերուած են 10 տո-  
ղեր եւ ընդհատուած գիտողութեամբ. «տես  
այլուր»։ բայց ո՞ւր: Յամենայն դէպս ոչ  
Ալիշան Սիսականի մէջ եւ ոչ Կոստանեան  
Վիմական տարեգրութեան մէջ չեն յիշած  
գայն: